ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ---------- 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու և անվանափոխելու մասին» N186-Ա որոշման 2-րդ կետում «Դավիթ Անհաղթ» պոլիկլինիկա» բառերը փոխարինել «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառլեն Լազարի Եսայանը ծնվել է 1933թ. դեկտեմբերի 21-ին, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մեծ-Շեն գյուղում, ծառայողի ընտանիքում։

1953թ. ավարտել է Ստեփանակերտ քաղաքի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետը։

1953-54թթ. աշխատել է նույն շրջանի Թալիշ գյուղի միջնակարգ դպրուցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ։

1958թ. փետրվար-օգոստոս ամիսներն ընկած ժամանակահատվածում աշխատել է Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի դպրոցում։

1958-1964թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում։

1961-1964թթ. եղել է ինստիտուտի արհմիության կոմիտեի նախագահ։

1962-179թթ. եղել է բուժաշխատողների արհմիության կոմիտեի անդամ։

1964-1976թթ. աշխատել է ՀՀ արհիմիության կոմիտեի պատասխանատու քարտուղարի պաշտոնում։

1977-2003թթ. աշխատել է Երևանի 8-րդ բուժմիավորումում՝ որպես գլխավոր բժշկի ժ/պ փորձագիտական գծով տեղակալ։

2003-2004թթ. աշխատել է «Դավիթ Անհաղթ» ԲԿ տնօրենի փորձագիտական գծով տեղակալ, այնուհետև՝ նույն ԲԿ-ի ԲՓՀ-ի նախագահ։

2006թ. ՀՀ նախագահի հրամանագրով Կառլեն Լազարի Եսայանին շնորհվել է ՀՀ վաստակավոր բժշկի պատվավոր կոչում։

2006թ. հունվար ամսին ընտրվել է ՌԴ բնական գիտությունների հայկական մասնաճյուղի անդամ, նույն թվականից հանդիսանում է Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

2007թ. պարգևատրվել է մեծ մարդասեր, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով։

2007թ. Եվրոպայի ակադեմիայի կողմից ստացել է Պաուլ Էռլիխի արծաթե մեդալ։

2010թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Երախտագիտության» մեդալով։

2010թ. ՀՀ ԵԿՄ կողմից պարգևատրվել է հուշամեդալով։

2011թ. «Փառապանծ մարտիկ» ՀԿ կողմից պարգևատրվել է «5-րդ բրիգադ» մեդալով։

Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի կողմից Կառլեն Լազարի Եսայանին շնորհվել է Մանթաշևի անվան ոսկե շքանշան, ՀՀ առողջապահության նախարարի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարի հուշամեդալ, Երևանի քաղաքապետի կողմից պարգևատրվել է «Երևան քաղաքի պատվավոր բժիշկ» հուշամեդալով։

Կ. Եսայանը պարգևատրվել է նաև Մյասնիկյանի, Սպանդարյանի գործադիր կոմիտեների, առողջապահության նախարարության և Բուժաշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի համատեղ պատվոգրով, ՀԱՄԽ-ի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ առողջապահության նախարարության, Արցախի ազատամարտիկների միության նախագահի պատվոգրերով, ինչպես նաև շնորհակալագրեր է ստացել ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ առողջապահության նախարարության, ԼՂՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի կողմից։

Հաշվի առնելով Կառլեն Եսայանի գործունեությունը, մեծ ավանդը և «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի ժ/պ Ա. Սիսոյանի միջնորդությունը, Երևան քաղաքի ավագանու որոշմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N186-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N186-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**